ՀՏԴ՝ 929:75(479.25)Արուտչյան+75(479.25)
DOI: 10.54503/2953-8122.2023.15(2)-153

ՌԵԱԼԻԶՄԸ ՌՈՒԲԵՆ ԱՐՈՒՏՉՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՌԻՓՍԻՄԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ*

Հոդվածը ներկայացնում է հայ նկարիչ և ճարտարապետ Ռուբեն Արուտչյանի (1947-2022) ստեղծագործական ուղին, մասնավորապես նկարչության բնագավառում: Նա սերում է Արուտչյանների հայտնի տոհմից և, զարմանալի չէ, որ շարունակել է հորեղբոր՝ Միքայել Արուտչյանի և հոր՝ Սերգեյ Արուտչյանի ուղին: Ռուբեն Արուտչյանն ապրել ու ստեղծագործել է Հայաստանում և նկարել, ինչպես ինքն է նշում, «հայերեն»:

Բանալի բառեր՝ Ռուբեն Արուտչյան, սերունդներ, ռեալիզմ, Հայաստան, հավատ, նկարչություն, ժառանգություն:

Ներածություն

Անհատի, արվեստագետի դեպքում՝ առավել ևս, չափազանց կարևոր են միջավայրն ու շրջապատը, որտեղ ծնվել և ձևավորվել է նա: Ռուբեն Արուտչյանը (1947-2022) ոչ միայն հայտնի տոհմի ներկայացուցիչն է, այլև նրա ավանդույթների ու արժեհամակարգի կրողը: Հանրահայտ տոհմի այս հարուստ պատմությունն սկսվել է Արցախ աշխարհի Շուշի քաղաքում: Այստեղ են ծնվել ու ստեղծագործել հայ անվանի քանդակագործ Հակոբ Գյուրջյանը, գեղանկարիչ Ստեփան Աղաջանյանը: Ահա այս գեղարվեստամշակութային միջավայրում էին ապրում Արուտչյանները և մանրահատիկներով կերտում իրենց՝ արուտչյանական տոհմի ապագան: Միքայել Արուտչյանը[1]՝ Ռուբեն Արուտչյանի հորեղբայրը, ծնվել էր Շուշիում, իսկ նրա կրտսեր եղբայրը՝ Սերգեյ

---

* Երևանի պետական համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու, ripsivardanyan@mail.ru, հոդվածի ներկայացնելու օրը՝ 01.02.2023, գրախոսելու օրը՝ 10.03.2023, տպագրության ընդունելու օրը՝ 10.05.2023:

[1] Միքայել Արուտչյանը (1897-1959) գեղարվեստական բազմաթիվ՝ հիմնականում եվրոպական և ռուս դասականների պիեսների ձևավորումից զատ, մեծ դեր է խաղացել հայկական գրքարվեստի զարգացման գործում, հանդես եկել նաև իբրև ծաղրանկարիչ, տե՛ս **Աղասյան Արարատ,** Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 89-116:

Արուտչյանը[2], հետագայում Բաքվից տեղափոխվելով Երևան, ակտիվորեն ստեղծագործեց թատերական և կինոյի նկարչության, քաղաքական պլակատի և ծաղրանկարի ասպարեզում[3]:

Արուտչյանի ստեղծագործությունները ոչ միայն անհատի, այլև տոհմի պատմության, արժեհամակարգի կրողն են: Ընտանեկան մթնոլորտը, միջավայրը, ավանդույթներն իրենց շարունակությունն ունեցան Ռուբեն Արուտչյանի արվեստում[4]:

Հիմնական նյութի շարադրանք

Ռուբեն Արուտչյանի հետ մեր հանդիպումը տեղի ունեցավ 2021-ի հոկտեմբերին, մի քանի ամիս անց, ցավոք, նա հեռացավ կյանքից: Ուստի հետադարձ հայացք նետելով այդ հանդիպմանը, որի նպատակը նկարչի ստեղծագործության առավել խորքային ուսումնասիրությունն էր, այսօր այդ զրույցները, մտորումները, կարծիքների փոխանակումը գուցե առավել կենսական են թվում: Խոսակցության ժամանակ, հիշելով իրենց մեծ ընտանիքը, հորեղբորը, ծնողներին,

---

[2] Սերգեյ Արուտչյանը (1912-1986) գեղարվեստական ձևավորումներ է կատարել հայկական թատրոնների՝ պատերազմական թեմաներ արծարծող ժամանակակից պիեսներում, նաև նպաստել հայ ծաղրանկարչության զարգացմանը՝ լինելով «Ոզնի» պատկերազարդ զավեշտահանդեսի գլխավոր խմբագիրը: Տե՛ս **Աղասյան Արարատ,** Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, էջ 112-119:

[3] Հարցազրույցներից մեկում Ռուբեն Արուտչյանը նշել է, որ իր հայրը Շուշիի հարուստ արդյունաբերողի ընտանիքի իններորդ երեխան էր: Երեխաներից նկարիչներ դարձան առաջնեկը՝ Միքայել Արուտչյանը, և իր հայրը՝ Սերգեյ Արուտչյանը: Միքայելը հայկական բեմանկարչության հիմնադիրն էր, հիասքանչ նկարազարդող, ում ժամանակին հեղափոխական գործունեության համար հեռացրել էին Փարիզի հայտնի ակադեմիայից: Իսկ հայրիկից խոսելով, նա նշում էր. «Հայրս արտասովոր մարդ էր, բնատուր շնորհքով ամեն ինչում՝ բանաստեղծություններ էր գրում, նկարում էր...»: Տե՛ս **Оганисян Анаит.** Динстия, В темноте прожитых лет, как в фотоателье, проявлялись люди, “Урарту”, N 15, 1997.

[4] Ըստ նկարչի՝ «...Եթե ծնվել ես նկարչի ընտանիքում, անկարող ես նկարիչ չդառնալ, ուզես, թե ոչ՝ արվեստը գրավում է: Շփվելով լավագույն գլուխգործոցների հետ, մարդը փոխվում է, դառնում լավը, դադարում է նկատել բացասականը»: Տե՛ս **Гюльмисарян Рубен.** Галерея, “Пятница”, N 72, 23 июня, 2017.

արվեստագետը կարոտով էր պատմում մանկության ամեն մի հուշ[5]: Ռուբեն Արուտչյանը մինչև կյանքի ավարտն ապրել և ստեղծագործել է հայերեն: Նա վստահ էր, որ հայկական արվեստն իր Հայրենիքում ապրող և արարող անհատի արվեստն է: «Հայ լինելու համար անպատճառ պե՞տք է մանրանկարչությունից էլեմենտներ մտցնել: Դա աբսուրդ է: Արհեստական բաներ ես առհասարակ չեմ սիրում: Ապրում եմ այստեղ, իմ ուղնուծուծը, ողջ մտածելակերպը հայկական են, հայերեն», - ասում է նա[6]:

«Հայկական մոտիվներ» վերնագրված երկերը նկարչի բառերի առարկայական վերարտադրությունն են՝ եկեղեցու բակը, խաչքարերը, եկեղեցու հնամենի կամարներից ներթափանցող Աստծո զորեղ, ամոքիչ լույսը և գավիթի Տիրամայրը Մանկան հետ: Հետաքրքիր է, որ եկեղեցին պատկերված է ոչ թե ամբողջապես, այլ մասնակի, սակայն այս դետալավորված սիմվոլիզմն անգամ ներծծված է հայ ժողովրդի բազմաչարչար պատմությամբ. այդ են վկայում կիսաթեք խաչքարերն ու եկեղեցու սյուները, իսկ հաստատուն-կանգուն, վեր խոյացող աննկուն խաչքարերը հայի լինելիության գաղափարի կրողն են: «Որպես հայ մարդ ինձ համար թանկ է Հայ Եկեղեցին, - ասում է նկարիչը, - անգամ, երբ մեր պետականությունը հարվածի տակ էր, Եկեղեցին հանդիսանում էր Հայի միասնականության միակ հանգրվանը: Եկեղեցուն ես վերաբերվում եմ որպես մեր պահապանի՝ դարերի խորքից այնտեղ էին դասավանդում, այնտեղ սովորում: Մենք միշտ ունեցել ենք Կաթողիկոսներ, միշտ, հազար յոթ հարյուրից ավելի տարիներ, անընդհատ... Նաև մի հարց է ինձ համար անհասկանալի՝ ինչպես է պահպանվել մեր լեզուն: Իմ լեզուն դա իմ երկիրն է...», - նշում է նկարիչը[7]:

---

[5] Հայրիկի գործուղումները (աշխատանք կինոյում, թատրոնում, հայրենիքից դուրս) զավակի համար շատ երկար ու դժվար էին թվում: Հարցազրույցներից մեկում Արուտչյանն ասել է. «Գրեթե միշտ հիշում եմ հայրիկիս, ներկերի բույրը՝ դա իմ մանկության բույրն է, հայրիկիս բույրը: Ես երախտապարտ եմ նրան. նա միակն էր ողջ ընտանիքից, որ տեղափոխվեց և մնաց ապրելու Երևանում»: Տե՛ս **Пашян Инна.** Немного солнца в холодной воде, “Новое время”, N183, 4 октября, 1994, вторник.

[6] Նկարչի հետ մեր հանդիպումից:

[7] Հատված նկարչի հետ մեր զրույցից:

«Հայկական մոտիվներ» ստեղծագործություններն իմաստաձևաբանական արտահայտչալեզվով, ասելիքով ու տրամադրությամբ հեռահար աղերսներ ունեն Վ. Սուրենյանցի «Ոտնահարված սրբություն» կտավի հետ:

«Դեպի լույս» հորինվածքը պատկերում է հոգևորականներին եկեղեցու մուտքի՝ շեմի մոտ: Հեղինակն ասես փորձում է ընդգծել շեմի՝ խորհրդանշական իմաստն իբրև բնականի ու գերբնականի սահմանագիծ, հատման կետ: Տաճարի շեմը, սահմանագիծը, ասել է թե՝ աշխարհիկ և հոգևոր իրականություններն իրարից բաժանող ու միաժամանակ միավորող հատվածը հավատացյալին տեղափոխում է լինելիության մեկ հարթությունից դեպի մյուսը, որտեղ ժամանակն ու տարածությունն այլևս այլ չափումներում են գտնվում՝ ամենօրյա կենցաղի և մարդկային փոքր հոգսերի բեռից անդին: Հոգևորականների ձեռքերում վառված ճրագներ են՝ Աստծո առաջ ինքնամաքրման, ինքնաայրման խորհրդանիշը: Մոմն ու պատրույգը մարդու հոգու և մարմնի փոխակերպումն են: Նկարչին բնորոշ զուսպ ներկապնակում և այն պարագայում անգամ, երբ դիմագծերը հատուկ ընդգծված չեն, առանձնանում են եկեղեցու ծառայողների կենտրոնացած, ասես դեպի ներաշխարհ ուղղված, ինքնազննման, ինքնաճանաչման հայացքները: Աստծո ծառաների գլխավերևում խոյանում է Տիրոջ դաստառակը՝ խորաթափանց, հեզաբարո հայացքով:

Արուտչյանը, ինչպես հայտնի է, ստացել է ոչ միայն նկարչական, այլև ճարտարապետական կրթություն[8]: Նրա կոմպոզիցիաներում ձևը, պատկերման ոճը ճարտարապետական ձևերի, գծի գրաֆիկական նրբագեղության կրողն են: «Հիմնական ձև» կտավում առավել ընդգծված են վերոնշյալ արտահայտչաձևերը՝ եկեղեցու պատրանք-արտացոլանքը ստեղծում-պատկերում է մի քանի խաչ՝ մուտքի, գավիթի, գմբեթի կրկնակի-քառակի պատկերմամբ: Միաժամանակ ողջ ստեղծագործությունը բարակ, լուսավոր, ճերմակ գծով բաժանված է չորս մասի՝ այլաբանական խաչի: Ընդգծված գիծը, լուսաստվերի նրբագույն

[8] Ռ. Արուտչյանի անցած ճարտարապետական ճանապարհի մասին առավել մանրամասն տե՛ս Успех молодых архитекторов, “Коммунист”, 1 мая, 1971. **ՀՀԳ**, Մրցանակներ երիտասարդ ճարտարապետներին, «Երեկոյան Երևան», 4 մայիսի, 1971 ևն:

անցումներն Արուտչյանի կտավները դարձնում են գրաֆիկական: Իսկ տեխնիկան, նկարչի խոստովանությամբ, ինքն իրեն է ծնվում, և բնավ պարտադիր չէ, որ սկսված գործը նույն տեխնիկայով էլ ավարտվի[9]:

Ստեղծագործողի մոտ սպիտակ կտավը, թուղթն առաջացնում են շատ գրավիչ ու միաժամանակ նաև անսպասելի բացահայտումներ: Նրա յուրաքանչյուր գործ բովանդակ է: Արուտչյանն առարկայական արվեստի սիրահար է, նրան հուզում է մարդն իր կերպարով, սովորույթներով: Հավանաբար դա է պատճառը, որ Արուտչյանը նախապատվությունն առավել տալիս է դիմանկարին, բացահայտում մարդկային ներաշխարհը, հոգեբանական ենթաշերտերը: Մարդու, անհատի ճակատագիրը, դրաման հետաքրքրել են նրան դեռ մանկուց: Պատահական չէ, որ մամուլում բազմիցս անդրադարձել են նրա՝ տարբեր տարիներին ստեղծված գործերին, թե՛ որպես նկարիչ և թե՛ որպես ճարտարապետ: Բազմաթիվ հաղթանակներից թերևս առանձնանում է ութ տարեկանում Դելլիի մանկական մրցույթում շահած դիպլոմը[10]: Մեկ այլ աղբյուրում՝ 1956-ի «Сталинец» թերթում տպագրված հոդվածում, կարդում ենք. «Տեսանելի տեղում Հայաստանի ամենից պատանի ներկայացուցիչներից մեկի՝ ութամյա Ռուբեն Արուտչյանի «Իմ քույր Լենոչկան» ջրանկարն է: Փոքրիկ աղջիկը, դաշնամուրի առաջ նստած, մատներով ստեղներին է հարվածում»[11]: Արուտչյանի խոստովանությամբ, պաշտում է, երբ իր երկերի հերոսներն անցյալից են, ովքեր իր հետ կյանք են անցկացրել: Նա չի կարող նկարել մարդու, ում չի հավանում: Անկախ այն բանից, նա իր ժամանակակի՞ցն է, թե՞ անցյալ դարերից[12]: Արվեստագետը պատկերել է Սայաթ-Նովային, Կո-

---

[9] «Մոտ վեց-յոթ տարի առաջ սկսեցի նկարել ակրիլով, մինչ այդ յուղաներկով էի աշխատում, հիմա ակրիլի բոլոր գաղտնիքներին տիրապետում եմ. այն առավել արագ աշխատելու հնարավորություն է տալիս, դրանով էլ հետաքրքիր է, շուտ է չորանում»,- մեզ հետ զրույցում նշեց նկարիչը:

[10] **Егиазарян К.** История с продолжением и без, “Республика Армения”, N 221 (1981), 21 ноября 1998, суббота.

[11] **Фолуменов С.** Юные дарования Армении, “Сталинец”, N 34, 18 марта, 1956, воскресенье.

[12] **Джангиров Павел** Рубен Арутчян: Мои друзья – Рембрандт и Пикассо, “Пятница”, N 4(40), 5 февраля, 2016.

միտասին, Ռեմբրանդտին և Պիկասսոյին:

Կոմիտասին պատկերող երկու ստեղծագործությունները (2006, 2014) Մեծ երգահանին, կոմպոզիտորին ներկայացնում են ազգի վիշտն ու տառապանքն աչքերում: Առաջին կտավում (2006) գորշ ու անելանելի մթի միջից առանձնանում է Վարդապետի լուսարձակող, սակայն անսահման դալուկ դեմքը: Անդրադառնալով այս ստեղծագործությանը՝ Արարատ Աղասյանը նկատում է. «...ստվերային կտրուկ բախումների ու գունային շեշտադրումների շնորհիվ արվեստագետն ստեղծել է դրամատիկ թանձր, հուզական, լարված մթնոլորտ՝ բացահայտելով կերպարի ներքին՝ հոգեցունց ապրումները»[13]: Կոմպոզիտորի՝ 2014-ին արված կտավում Կոմիտասը խաչափայտն ուսին է, դեպի հեռուն հառած անհույս հայացքով, ուսերին կրելով մի ողջ ժողովրդի պատմության ծանր կնիքը: Նկարչի նախընտրելի արտահայտչաձևն է անդրադառնալ պատմական դեպքերին անհատների միջոցով:

«Երդվյալները» խմբակային դիմանկարում «Նեմեսիս» կազմակերպության՝ իրենց մեջ ժողովրդի վիշտն ու ցավը և վրեժխնդիր լինելու արժանապատվությունը կրող հիանալի հայ երիտասարդների կերպարներն են: Հերոսների ներաշխարհին առավել ծանոթանալու և այն ճշգրիտ փոխանցելու համար նկարիչը ջանասիրաբար հավաքել է բոլոր տեղեկություններն ու նյութերը, որոնք որևէ կերպ առնչվում են նրանց կենսագրություններին[14]:

Արուտչյանի արվեստում յուրովի մեկնաբանություն է գտել Տիրոջ՝ խաչափայտին գամված ստեղծագործությունը: Սպիտակի ու հողագույն դարչնամոխրագույնի երանգների անցումներով պատկերված են Քրիստոսի արյունոտ գլուխը, կիսադեմն ու մարմինը մեջքից: Մարդկության սխալներն իր ուսերին կրող Միածինը ներքև ուղղված հայացքով է: Ինչո՞ւ է Քրիստոսը պատկերվել այս դիրքով: «Քրիստոսը, մեր հավատքը շուռ են եկել մեզանից, կամ, ո՛չ, մենք ենք շուռ եկել հավատքից,

---

[13] Տե՛ս **Աղասյան Արարատ**, Կոմիտասը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով, Երևան, 2019, էջ 16:

[14] Տե՛ս **Мнацаканян Рубен.** История одной работы, “Новое время”, 17 июля, 2010, суббота.

ինչո՞ւ պետք է Քրիստոսը շրջվի: Մենք ենք հակառակ, ամեն ինչին մեջքից նայում», - ասում է Արուտչյանը[15]:

Արուտչյանն ունի մոտ քսանից ավելի ինքնանկարներ, իր իսկ խոսքով՝ որևէ մեկի այդքան լավ չի ճանաչում, որքան ինքն իրեն: Արվեստագետի համար դա իր անձը մեկնաբանելու, նաև քննել-զննելու, կյանքի՝ իրեն պարգևած փոփոխությունները բացահայտելու փորձեր են: Դրանք ոչ թե զուտ արտաքինը հավաստի պատկերելու միջոց են, այլ տվյալ պահի կամ տևական ապրումների արտահայտություն: Ռեմբրանդտը, իր «Փորձերում» մեկնաբանելով ինքնանկարները, նշում է. «Ես չեմ նկարում ինքս ինձ, ես փոխանցում եմ իմ վիճակները (passages)»[16]: Կոմպոզիցիոն հետաքրքիր մեկնաբանություն ունի «Ինքնանկար»-ը մոլբերտի մոտ: Այն յուրովի խաչափայտ է, որին սերտաճած է հեղինակը. դա նաև անհատի, ստեղծագործողի՝ իր իսկ խաչը կրելու գաղափարն է արտահայտում[17]:

Արուտչյանի դիմանկարների հերոսները հիմնականում անհատներ են որոշակի իրավիճակներում, իրենց ճակատագրերով ու պատմությամբ[18]: Երևակայական հերոսները հաճախ միջավայրի կամ գուցե որոշակի մտածմունք-իրավիճակի կերպարում են («Ժպիտ», «Կիթառահարուհի», «Մելամաղձություն», «Նամակ», «Երեկո», «Միայնակություն»): «Միայնակություն» ստեղծագործության մեջ ներաշխարհը փոխանցող նուրբ երանգներով արտահայտված են անձի մենությունը, հուսահատությունը, անելանելի վիճակը: Ծնկները ձեռքերի մեջ առած

---

[15] Հատված նկարչի հետ մեր զրույցից:

[16] Տե՛ս **Алпатов М.,** Очерки по истории портрета, Москва, 1937, стр. 34:

[17] Ըստ նկարչի՝ արվեստը բոլորի համար չէ, այն ցուցահանդեսներ և թանգարաններ այցելող, արվեստը հասկացող, ընկալող մարդկանց համար է: Եվ եթե խելագար, չարացած ու թվայնացած մեր աշխարհում նկարիչը դեռ մոտենում է մոլբերտին ու ինչ-որ բան ստեղծում, ուրեմն արվեստը, իր արվեստը որևէ մեկին պետք է: «Եթե տասը հոգու իմ արվեստը հետաքրքիր է, ես կաշխատեմ», - մեր հանդիպման ժամանակ ընդգծեց Արուտչյանը:

[18] Դիմանկարում արծարծվող բնավորության, հոգեվիճակի մասին առավել մանրամասն տե՛ս **Кон И.** В поисках себя, Москва, 1984, стр. 38: Աշխատության հեղինակը նշում է, որ դիմանկարի առաջացումը կապված է, նախ և առաջ, մարդկային անհատականության, նրա բնավորության, մարդ-անհատի հանդեպ հետաքրքրության հետ:

կնոջ կլորացած մարմինն ասես փորձում է պաշտպանվել, թաքնվել ողջ աշխարհից: Մութ խավարում հազիվ նշմարվող մարմինն իր ցավն ու հույզերը պարփակել է գնդված մարմնում:

Անկախ նկարելաոճից ու մատուցելաձևից՝ Արուտչյանին հոգեմոտ է ռեալիզմը: «Ես ռեալիստ եմ, այսինքն իմ ձևի մեջ ռեալիստ, առարկայական եմ: Պիկասսոն աբստրակցիոնիստ չէ, ռեալիստ է, գուցե իր ձևով դեֆորմիստ է, ձևախեղում է, բայց արտացոլում է առարկան, վրձնով հենց այնպես չի հարվածում», - ասում է նկարիչը[19]:

Միանգամայն բնական է, որ մասնագիտությունը կենսաձև դարձրած նկարիչը մշտապես քայլում էր ոչ միայն ժամանակին համընթաց, այլև կանխազգում էր այն: Համավարակի ժամանակ ստեղծվեցին նկարչի «Աշխարհն առանց մեզ» խորագիրը կրող աշխատանքները: Հետո նա անցավ սև-սպիտակ գրաֆիկայի, իր մեկնաբանությամբ, նրան սկսեց գրավել գիծը[20]:

Եզրակացություն

Արուտչյանն իր հետագա անելիքը տեսնում էր գրքարվեստում, աշխատում էր վերջերս մահկանացուն կնքած քրոջ՝ Կարինա Մուսաէլյան Արուտչեանի «Полководец Соня, или В поисках земли Обетованной» վեպի նկարազարդումների վրա: «Դա մեր էպոխայի ավարտն է, Մուսաէլյան-Արուտչյան, ինձ անչափ հետաքրքրեցին գաղափարը ու դրա հիման վրա արվելիք սև ու սպիտակ նկարազարդումները: Գրքում իմ պապիկն ու տատիկն են: Տատիկս Սարուխան-Բեկերի տոհմից էր՝ Մարգարիտա Նիկոլաևնան»[21], - նշում էր արվեստագետը: Այս գրքի նկարազարդումը որոշակի առումով տոհմի, սերնդի ինքնակենսագրականը պետք է լիներ: Ուստիև միանգամայն արդարացված էր այն թրթիռը, որով նա մոտենում էր աշխատանքին: Գրքի, վեպի նկարազարդումը հնարավորություն էր ստեղծագործողի համար կրկին և կրկին առնչվելու իր իսկ սեփական պատմության հետ, նորովի նայելու ինքն իրեն, նորից վերապրելու արդեն վերապրածը: Այս աշխատանքը, ինչպես և Ռուբեն Արուտչյանի ուղու մեկնարկը, սկիզբ էր առնում

---

[19] Հատված նկարչի հետ մեր զրույցից:

[20] Ռ. Արուտչյանը շատ է զբաղվել գրաֆիկայով, նաև՝ տպագրական: 2021թ. ցուցադրվել է գրաֆիկական սև ու սպիտակ աշխատանքների մի բաժինը:

[21] Հատված նկարչի հետ մեր զրույցից:

Արուտչյանների տոհմի ընտանեկան հաստատուն արժեքներից:

Ռուբեն Արուտչյան, «Հայկական մոտիվներ»

Ռուբեն Արուտչյան, «Հայկական մոտիվներ»

Ռուբեն Արուտչյան, «Կոմիտաս»

РЕАЛИЗМ В ПРОИЗВЕДЕНИЯХ РУБЕНА АРУТЧЬЯНА

РИПСИМЕ ВАРДАНЯН

В статье представлен творческий путь армянского художника и архитектора Рубена Арутчьяна (1947-2022). Рассматривается, в частности, его живопись. Он происходил из династии известных художников Арутчьянов и, что неудивительно, пошел по стопам дяди Микаела Арутчьяна и отца Сергея Аручьяна. Рубен Арутчьян жил и творил в Армении и писал, как он сам отмечал, «по-армянски».

Ключевые слова: Рубен Арутчьян, реализм, поколения, Армения, вера, живопись, наследие.

REALISM IN THE CREATIONS OF RUBEN ARUTCHYAN

HRIPSIME VARDANYAN

The article presents the creative path of the Armenian artist and architect Ruben Arutchyan (1947-2022), in particular, in the field of painting. He comes from the family of famous artists Arutchyans and, not surprisingly, followed the footsteps of his uncle Mikael Arutchyan and father Sergey Arutchyan. Ruben Arutchyan lived and created in Armenia and painted, as he himself put it, "in Armenian".

Key words: Ruben Arutchyan, generations, realism, Armenia, faith, painting, heritage.